Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2023 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

2023 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտները կապիտալ սուբվենցիաների մասով անհրաժեշտ է ավելացնել 643 699.9 հազար դրամով: Համաձայն ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2103-Ն որոշման՝ Մասիս համայնքում իրականացված ծախսային ծրագրերով գնման պայմանագրերի շրջանակներում մարզպետարան ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա հատկացվել է կապիտալ սուբվենցիա հետևյալ աշխատանքների համար՝

- Մասիս համայնքի բնակավայրերում արտաքին լուսավորության համակարգի կառուցման և նորոգման ծրագրի իրականացման համար՝ 302 850.9 հազար դրամ
- Մասիս համայնքի բնակավայրերում ոռոգման համակարգի կառուցման և նորոգման ծրագրի իրականացման համար՝ 280 099.0 հազար դրամ
- Մասիս համայնքի բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների համար՝ 60 750.0 հազար դրամ

Վարչական մասի փոփոխությունը պայմանավորված է համայնքի ասֆալտապատ ճանապարհներին ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնելու հետ: Անհրաժեշտ է բյուջեում ճանապարհների ընթացիկ նորոգման համար նախատեսված միջոցներն ավելացնել 2400.0 հազար դրամով:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

Հազար դրամ

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի ծախսեր*	*Ֆոնդային մասի մուտքեր*
				Եկամուտներ				
1				**Կապիտալ սուբվենցիաներ**				643 699.9
				Ծախսեր				
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**				

3				Հատուկ նպատակային նյութեր	4269	-2400.0		
4	04	2	4	**Ոռոգում.**				
5				Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կապիտալ նորոգում	5113		280099.0	
6	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.**				
7				Համայնքի բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքներ	5112		60750.0	
8	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.**				
9				Ճանապարհների փոսային նորոգում	4251	2400.0		
10	06	4	1	**Արտաքին լուսավորություն.**				
11				Մասիս համայնքում լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	5112		302850.9	
				Ընդամենը		***0.0***	***643699.9***	***643699.9***

2023 թվականի բյուջեի փոփոխությունների արդյունքում ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը կավելանան

643 699 900 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ